ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ, ԻՐԱՑՄԱՆ ՏՆՕՐԵՆ

ՀՀ, ք. Երևան,0047, Ա. Արմենակյան 127, հեռ. +374(11) 65 16 58, +374(11) 59 13 41

N 22-863

«06» 04 20 22 թ.

Ձեր _____

ՀՀ Արդարադատության նախարարության

Գլխավոր քարտուղար

տիկին Ս. Գևորգյանին

Հարգելի տիկին Գևորգյան

Ի պատասխան Ձեր 18.03.2022թ. թիվ 11703-2022 գրության տրամադրում եմ 22.02.2019թ. կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման ԿՊ0010-2 կենտրոնացված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը (2 օրինակից):

Խնդրում եմ այն հաստատել և մեկ օրինակը (մեր նշագրումով) վերադարձնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ:

Դ. ՂԱԶԻՆՅԱՆ

Վ.Մեսրոբյան
+374 11 59 13 20

Հայաստանի Հանրապետության

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան
(կնքման վայրը)

«____» _____ 2022թ.

*«22» փետրվարի 2019 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման ԿՊ0010-2 պայմանագրի (այսուհետ՝ **«Պայմանագիր»**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ **«Մատակարար»**), ի դեմս Գլխավոր տնօրեն Կ.Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Արդարադատության նախարարությունը (այսուհետ **«Սպառող»**), ի դեմս Գլխավոր քարտուղար Ս.Գևորգյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով **«Կողմեր»**, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ **«Կողմ»**, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.*

1. *Պայմանագրի 6-րդ հավելվածին կից ցանկում («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ բաժանորդներ ՀՀ Արդարադատության նախարարության ստորաբաժանումներ) ավելացնել ստորև նշված բաժանորդներին.*

h/h	ID	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ. ցանցի) անվանումը
1	117128005	0529205	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ)	Գեղամա մ/ճ «Սևան» էլ.ցանց
2	9790047	4006224	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ)	Գեղամա մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց

2. *Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2022թ. մարտի 1-ից, Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:*
3. *Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:*
4. *Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:*

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝
ք. Երևան, Ա. Արմենակյան 127

Լիազորված անձ՝

_____ Դ. Ղազինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.

Սպառող՝
ՀՀ Արդարադատության նախարարություն

Գտնվելու վայրը՝
ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8

Գլխավոր քարտուղար՝

_____ Ս. Գևորգյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.